ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 57-Ա — 30 հունվարի 2026 թ.

# ԼՅՈՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ԿՆՔՎԱԾ N 47 ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի հունվարի 12-ի N 551 արձանագրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կարեն Զազյանի 2026 թվականի հունվարի 22-ի Ն/182 զեկուցագիրը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճավանի Ա. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լյովա Խաչատրյանի հետ 2026 թվականի հունվարի 30-ից լուծել 2022 թվականի մայիսի 16-ին կնքված N 47 ժամկետային աշխատանքային պայմանագիրը՝ ազատելով նրան զբաղեցրած պաշտոնից:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճավանի Ա. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լյովա Խաչատրյանի համար վերջին աշխատանքային օր համարել 2026 թվականի հունվարի 30-ը:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840508

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ